ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ԿԴ/1146-11025

Քաղ. Երևան « 08 » փետրվար 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Փաշայանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշմամբ ամրագրված դրույթները, «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11025. Գնահատման և թեստավորման ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 518 380 900 (հինգ հարյուր տասնութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրով հիմք հանդիսացող նախահաշվի.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.9. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հանդիսանում է 2021 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափ և ներառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները: Հատկացվող միջոցները բաշխվում են ըստ իրականացվող միջոցառումների՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի:

4.2 Պետական մարմինը 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար Պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխումը, դադարումը և(կամ) լուծումը

7.1 Պայմանագիրն (ծագող պարտավորությունները) ուժի մեջ է մտնում Պայմանագրի կնքման պահից և գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահահարաբերությունների վրա:

7.2 Պայմանագրի փոփոխումը և (կամ) լրացումը կատարվում է գրավոր, Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը Պայմանագրի անբաժանելի մասն է:

7.3 Պայմանագիրը դադարեցվում և (կամ) լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2 Պայմանագրի հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.3 Պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրի դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Հասցե՝ ք. Երևան, Այգեստան 9/4
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022457 9000110366 97	Հ/Հ 900018003401
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ՝ 01551257
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ն. Հարությունյան	Ա. Փաշայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N1
2021 թվականի փետրվարի 8-ին
կնքված N ԿԴ/1146-11025 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

\N	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը
1	2	3	4	5	6	7
1	Պետական ավարտական և միասնական քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Շրջանավարտների և բուհ ընդունվողների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում՝ դպրոցն ավարտելու, բուհ ընդունվելու նպատակով: Բուհերի ուսանողական համակազմի համալրում: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում	Պետական ավարտական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 15000 բ) Մաթեմատիկա - 14500 գ) Հայոց պատմություն - 17350	25.12.2021	177528.4

				Միասնական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 7290 բ) Մաթեմատիկա - 8190 գ) Հայոց պատմություն -4550 դ) Օտար լեզուներ (անգլերեն -4826, ռուսերեն -457, ֆրանսերեն-88, գերմաներեն-126, իտալերեն -2, իսպաներեն-4, պարսկերեն-5) ե) Համաշխարհային պատմություն -41 զ) Կենսաբանություն 1327 է) Ֆիզիկա		

				-1494 ը) Քիմիա -1103 թ) Աշխարհագրություն 245 ժ) Ստեղծագործական աշխատանք -132		
2	TIMSS միջազգային ստուգատեսի անդամավճար	Մասնակցության վճար	Մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից անցկացվող միջազգային հետազոտություն : Ծրագիրը բաղկացած է փորձնական և հիմնական փուլերից: Նախատեսված է անցկացնել 2022-2023 թվականներին:		30.12.2021	38407.5
3	Հիմնական դպրոցի ավարտական քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Հիմնական դպրոցի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման նպատակով ավարտական քննական նյութերի մշակում և տրամադրում: Թեստային առաջադրանքների	Հիմնական դպրոցի ավարտական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Մաթեմատիկա (գր.) -32788 բ) գրականություն	30.08.2021	31560.0

			գաղտնիության ապահովում	(բանավոր) -32788 գ) Օտար լեզուներ (անգլերեն -10276, ռուսերեն -20640, ֆրանսերեն-770, գերմաներեն-960, սովորողի ընտրությամբ -142, բանավոր) դ) բնագիտություն (կենսաբանություն - 12444, ֆիզիկա -5624, քիմիա -1819, աշխարհագրություն - 12901 սովորողի ընտրությամբ, գրավոր)		
4	Կենտրոնացված ավարտական քննությանկազմակերպում և անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Հիմնական դպրոցի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում ,,Հայոց լեզու'' առարկայից: Քննական հավասար պայմանների ստեղծում և	<<Հայոց լեզու >> առարկայից քննություն (գրավոր, կենտրոնացված) հանձնողների թիվը՝ 32788 աշակերտ :	30.08.2021	79546.5

			գնահատման օբյեկտիվության ապահովում:			
5	Փոխադրական (էքստեռն) քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Աշակերտների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում ՝հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ դասարան փոխադրելու նպատակով: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	1) Էքստեռն փոխադրական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների և դասարանների ա) 1-6 –րդ դասարաններում ՝<<Մայրենի >> , <<Մաթեմատիկա >> (25 աշակերտ) բ) 7-8-րդ դասարաններում ՝<<Հայոց լեզու >>, <<Մաթեմատիկա>>(5 աշակերտ) գ) 10-րդ դասարանում ՝<< Հայոց լեզու և հայ գրականություն >>, <<Հայոց պատմություն >> , <<Մաթեմատիկա>> (1 աշակերտ)	30.12.2021	21544.0

6	Ավարտական էքստեռն քննությունների թեստերի տրամադրում	Թեստերի տրամադրում		9-րդ դասարանում- 200 աշակերտ 12- րդ դասարանում 300 աշակերտ	30.12.2021	727.3
7	Միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնորդ շրջանավարտների քննական թեստերի առաջադրանքների մշակում և տրամադրում	Քննությունների նախապատրաստում	Դիմորդների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում՝ արտասահմանյան բուհեր ընդունվելու նպատակով: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	Միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերի դիմորդների թիվը ըստ քննական առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 20 բ) Մաթեմատիկա - 40 գ) Հայոց պատմություն - 10 դ) անգլերեն - 40 ե) Ֆիզիկա - 20	30.05.2021	23623.0
8	Ուսումառության ընթացքում զինվորական	Քննությունների նախապատրաստում,	Դիմորդի ընդհանուր զարգացածության գնահատում ՝	<<Պատիվ ունեմ>> ծրագրի շրջանակում	30.08.2021	27450.0

	պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայության անցնելու համար դիմում ներկայացրած քաղաքացիների թեստավորման իրականացում 'Պատիվ ունեմ' ծրագրի շրջանակում	անցկացում և արդյունքների ամփոփում	<<Պատիվ ունեմ>> ծրագրի շրջանակում ուսումնառութուն ստանալու նպատակով: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	ուսումնառություն ստանալու նպատակով քննություն հանձնողների թիվը ըստ զինվորական մասնակցությունների ա)բնագիտական առարկանների թեստից քնություն հանձնողները - 200 բ) ընդհանուր զարգացվածության թեստից քննություն հանձնողները - 800		
9	Ներբուհական և կենտրոնացված քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Արվեստի, մշակույթի և սպորտի ոլորտի բուհերի ուսանողական համակազմի համալրում: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	Կենտրոնացված քննություն հանձնողների թիվը ըստ առարկանների ա) Ստեղծագործական աշխատանք (գրավոր) -150 բ) Հ.լեզու և հայ	10.07.2021	23564.0

				գրականություն (բանավոր) - 250 գ) Օտար լեզուներ (ռուսերեն -90, անգլերեն -760, գերմաներեն-33, ֆրանսերեն-30 , իսպաներեն -4, իտալերեն -1) բանավոր		
10	ԲՈՒՀ-երի ընդունելության մրցույթի կազմակերպում և անցկացում	Արդյունքների ամփոփում	Դիմորդների հայտերի հիման վրա բուհերի ընդունելության անցկացում:Մրցույթը կկատարվի երեք (առանձին դեպքերում երկու կամ մեկ) քննությունների գնահատականների հիման վրա՝ դիմորդների մրցութային միավորների համեմատման միջոցով : Ընդունելության օբեկտիվության ապահովում՝ համակարգչային հատուկ ծրագրով:	Ընդունելության մրցույթի մասնակիցների թիվը ըստ մասնագիտությունների -10650	30.07.2021	29825.0
11	Արտաքին ընթացիկ •նահատման կազմակերպում և	Քննությունների նախապատրաստում, անցկացում և	Աշակերտի ընթացիկ առաջադիմության անկախ գնահատում : Կբարելավի	Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների թիվը -	30.12.2021	32850.0

	անցկացում	արդյունքների ամփոփում	գնահատման գործընթացը՝ հետադարձ ազդեցությամբ նպաստելով ուսման որակի աճին: Տեխնիկական առաջադրանքները կսահմանվեն լրացուցիչ կերպով:	4000 աշակերտ՝ երկու առարկայից		
12	Ազգային ստուգատեսի կազմակերպում և անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակի բացահայտում ՝բնագիտական և (կամ) հայագիտական առարկաներից: Հիմնական գործոնների ազդեցության չափի բացահայտում: Աշակերտների գնահատման օբյեկտիվության ապահովում, հավասար պայմանների ստեղծում: Տեխնիկական առաջադրանքները կսահմանվեն լրացուցիչ կերպով:	Ազգային ստուգատեսի մասնակիցների թիվը -2500 աշակերտ	30.12.2021	19564.0
13	Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների, ''Հանրակրթություն '' պարբերականի մշակում	Տպագրություն	Քննական գործընթացի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տրամադրում:	Տպագրվում և հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվում է 1500 ական օրինակ ուղեցույց և	20.12.2021	12191.2

	և տպագրում			պարբերական:		
	Ընդամենը					**518,380.9**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022457 900011036637
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար
Ն. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն

«Գնահատման և թեստավորման կենտրոն»
ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Այգեստան 9/4
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003401
ՀՎՀՀ՝ 01551257

Տնօրեն
Ա. Փաշայան

(ստորագրություն)
Կ.Տ